№ 142 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5 № 142

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխանատու գործ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ-կաթոլիկների պատրիարքի ընտրութիւնը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ա.ելորդ է։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՐԾ

«Մշակի» № 139-ի մէջ տպվեց մի թղթակցութիւն Լօռու գաւառամասում գտնվող էջմիածնապատկան Մարց կալուածքի մասին, որ երկար ժամանակ գտնվում էր վէճի տակ պետական գանձարանի հետ։ Վէճը վերջացաւ, էջմիածինը ստացաւ յայտնի մաս և մնում էր կազմակերպել կանոնաւոր խելացի տնտեսութիւն։ Բայց էջմիածինը իր կողմից պէտք է բաժին հանէր ամբողջ կալուածքի մի քառորդ մասը այն կալուածատէրի ժառանգներին, որից մի ժամանակ ինքը գնած է եղել հողը։ Թղթակցութիւնը գտնում է, որ այդ բաժնեհանութիւնը կատարված է անկանոն կերպով և որ գիւղացիների վերաբերութեամբ սահմանված են նոր, աւելի ծանր տուրքեր։

Անկասկած՝ կալուածքի բաժնեհանութեան մասին պէտք է խօսեն ճիշդ թւերը և մենք սպասում ենք, որ գործին մօտ անձինք ներկայացնեն հողաչափութեան վրա հիմնված անվիճելի հաշիւներ, որոնք թիւրիմացութեան ոչ մի հեռք չը թողնեն այս հարցի մէջ։ Այդ ճշդութիւնը անհրաժեշտ է թէ յարուցած հարցը պարզելու համար և թէ մասնաւոր անձնաւորութիւններին վերաբերեալ ենթադրութիւնները և կասկածները փարատելու համար։ Հոգևոր իշխանութիւնը չը պէտք է վախենայ ծախքերից և եթէ հողաչափութեան համար անհրաժեշտ է մի յայտնի գումար ծախսել, նա այդ պէտք է անի, որպէս զի իր պատասխանատու դերը նա կատարի բաւարար կերպով և կարող լինի ներկայացնել բաժանման ճիշդ նկարագիր և ոչ թէ աչքաչափով ձևած հողաբաժինների հաշիւ։

Եթէ ճիշդ ուրուագիծ գոյութիւն ունի, այն ժամանակ հարցի մի մասը վճռվում է աւելի հեշտ կերպով և մնում է ապացուցանել եղած բաժանման իրաւացիութիւնը և նպատակայարմարութիւնը։

Գալով գործի միւս կէտին, այն է գիւղացիների վճարելիք տուրքերի աւելացնելու խնդրին, մենք կարծում ենք, որ այդտեղ կալուածական կառավարչութիւնը պէտք է չափազանց զգոյշ և շրջնկատ լինէր նոր կարգադրութիւններ անելու ժամանակ։ Կալուածական կառավարչութիւնը չը պէտք է նայի կալուածքի վրա, իբրև լոկ մասնաւոր սեփականութեան վրա, որտեղ հողի տերը սանձարձակ կարող է կատարել ինչ որ ցանկանայ։ Ոչ, հողի վրա հաստատված և տասնեակ տարիներ այնտեղ ապրող ժողովրդի վիճակը պէտք է նոյնպէս լուրջ հոգածութեան առարկայ դառնայ հողատիրոջ համար, որը կարող է իր գործը խելացի և աջող կազմակերպած համարել միայն այն ժամանակ, երբ թէ տնտեսութիւնն է բարեկարգված և թէ այնտեղ ապրող գիւղացու վիճակը ապահովված։

Ներկայ դէպքում մասնաւոր կալուածատէրը մի ամբողջ հիմնարկութիւն է, որ իր ձեռքն առնելով մի նոր և մեծ գործ, պարտաւոր է թէ բարոյապէս և թէ նոյն իսկ իրաւապէս կազմակերպել ամբողջ ձեռնարկութիւնը որոշ, խելացի և արդար կերպով։ Հոգևոր իշխանութիւնը առաջին անգամ թոյլ է տուել իրան մի նորմուծութիւն անել և նշանակել է կալուածքի կառավարիչ մի մասնագէտ։ Սակայն հէնց այդ առաջին քայլը պահանջում է, որ փորձը կատարվի աջող կերպով և տեղի չունենան այնպիսի շտապ կազմած կարգադրութիւններ, որոնք վնասեն գործին։ Տեղական հոգևոր իշխանութիւնը, չը բաւականանալով կառավարիչ նշանակելով, պէտք է կազմի հմուտ և մասնագէտ անձերից մի յանձնաժողով, որի զբաղմունքը պէտք է կալուածքի վերաբերեալ խոշոր և էական հարցերը քննել և տնտեսութեան հիմնական ծրագիրը մշակել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ռուսաց մամուլի այն մասը, որի բնորոշ անունն է «յայտնի» (անպատճառ չակերտների մէջ), մի անսպառ եռանդ ունի «հարցեր» ստեղծելու, թշնամիներ գտնելու և այդ թշնամիների դէմ «միջոցներ» քարոզելու մէջ։ Գրինգմուտների, Սուվորինների, Կամարովների և այլ նմանների բանակները, կամ, աւելի ճիշդ ասած, օրդանները հանգիստ նստել չը գիտեն, միշտ երևակայում են իրանց թշնամիներով շրջապատված, վտանգի մէջ և «օգնեցէք» յուսահատական աղաղակը ամեն անգամ բարձրանում է՝ զարմանք և ծիծաղ յարուցանելու համար։ Զարմանք և ծիծաղ ենք ասում, որովհետև այդ պարոնների գրածներին եթէ մի բոպէ հաւատ ընծայէք, պիտի կարծէք թէ Ռուսաստանը այն հզօր պետութիւնը չէ, որ աշխարհի մէջ ամենավիթխարի ոյժն է ներկայացնում, որ զեկավարող դեր է կատարում հաւասարակշիռ քաղաքականութեան մէջ, այլ այնքան թոյլ է, որ վախենում է իր մէջ ապրող այս կամ այն փոքրիկ ազգութիւնից և պիտի պաշտպանվի նրանից, պիտի վտանգ տեսնէ ամեն քայլափոխում։ Դրանից աւել էլ ինչ ծիծաղելի մոլորութիւն, կամաւոր, շինծու մոլորութիւն։ Ահա դրա մի քանի նմուշները։ Ցայտնի է, որ ռուսաց օրէնքները ապահովում են կրօնների կատարեալ ազատութիւնը։ Ինչպէս վայել է լուսաւոր սկզբունքներով զեկավարվող մի մեծ պետութեան, Ռուսաստանը իր օրէնքների պաշտպանութեան տակ է առել իւրաքանչիւր եկեղեցին, տալով նրան իրաւունքներ, արտօնութիւններ, պահպանելով ամեն մէկի հեղինակութիւնը նրան հետևողների մէջ։ Այդ լայն, արդար և քրիստոնէական հոգուն համապատասխանող սկզբունքը, սակայն, ինչ որ պատճառով վտանգաւոր է թւում «Новое Время» լրագրին։ Պրոֆէսոր Կորկունով այդ լրագրի մէջ մի շարք յօդուածներ է տպագրում, որոնք վերաբերվում են Ռուսաստանում գոյութիւն ունեցող այլափառ եկեղեցիներին և ոչ-քրիստոնէական դաւանութիւններին։ Այդտեղ պատմվում է, թէ ռուսաց օրէնքները ինչ տեսակ կազմակերպութիւն են տուել կրօնական դործերին, ինչպէս են պահպանում իւրաքանչիւր եկեղեցու անկախութիւնը, իրաւունքները։ Սուվորինի տեսակէտից լաւ չէ, որ այլափառ եկեղեցիները այնքան բացորոշ կերպով, հաստատ օրէնքներով են պաշտպանված։ Այսպէս, թէ յօդուածագիրը պրոֆէսորը և թէ լրագրի վարիչները դէմ են այն օրէնքներին, որոնք չեն թոյլ տալիս, որ այս կամ այն այլափառ եկեղեցու մէջ աղանդներ, հերձուածներ դոյանան և աստւ են, որ, ընդհակառակը, պէտք է կատարեալ ազատութիւն տալ այդ եկեղեցիների հետևողներին, որպէս զի աղանդաւորութիւնը թուլացնէ այլափառութիւնը Ռուսաստանում։ Հիմնվելով այդ հայեացքների վրա, «Новое Время»-ի մէջ ոմն պ. Կիրէեվ շտապեց յայտարարել կաթոլիկութիւնը անհաշտ թշնամի Ռուսաստանի դէմ և առաջարկեց քաղաքական բնաւորութիւն տալ այդ եկեղեցու ձգտումներին, միանալ հին կաթոլիկների հետ, որոնք չեն ընդունում պապի անսխալականութիւնը և այդպիսով կաթոլիկութեան դէմ հանել նոյն իսկ կաթոլիկութիւնը։

Մի ուրիշ նմուշ։ Լուր կայ թէ կառավարութիւնը շուտով պիտի վերաքննէ այն հողային օրէնքները, որոնք սահմանված են արևմտեան նահանգների համար։ «Москов. Вѣд.» լրագիրը, օգուտ քաղելով այդ դէպքից, առաջարկում է, որ արևմտեան նահանգներում սահմանափակվին նաև ռուսահպատակ գերմանացիների կալուածատիրական իրաւունքները, որովհետև արևմտեան նահանգները կատարելապէս գերմանական են դառնում։ «Кіевлянинъ» լրագիրը, պատասխանելով Մոսկվայի լրագրին, բերում է այն տարրական ճշմարտութիւնը, որ անկարելի է խորութիւններ դնել պետութեան հպատակների մէջ։

Եւ օտարտի կը լինէր խորութիւն դնել, երբ գերմանական ծագում կամ գերմանական ազգանուն ունեցող անձինքներին կառավարութիւնը յանձնել է նահանգների և ամբողջ շրջանների կառավարութիւնը, երբ նրանք նշանաւոր տարր են կազմում վարչութեան, զօրքի և բարձր կառավարութեան մէջ։ Այնպիսի միջոցներ, որպիսին է ռուսահպատակների այս կամ այն կարգի իրաւունքների սահմանափակումը, չեն կարող ընդունվել առանց շատ լուրջ պատճառների և առիթների։ Նրանք պիտի ունենան պատմական և քաղաքական անվիճելի հիմք։

Դառնանք նորից «Новое Время»-ին։ Մինչև այժմ Սուվորինների գեղեցիկ քունը խանգարում այն ձայներ անդրադարձնելու ընդունակութիւնն ունի։ Վերջացնում եմ իմ հաշիւները և մտադիր եմ օգտվել ամեն տեղ և ամենքից ճանաչված այն ճշմարտութիւնից, որ իրաւունք է տալիս ոչինչ հաշիւ չունենալ կատարելապէս անբարեխիղճ մարդկանց հետ։

Ուրեմն ինձ վրա պարտք է այս միայն դատաւորել այդ անբարեխիղճութեան ապացոյցները։ Ցօժարութեամբ կատարում եմ պարտքս։

1) Իմ նամակում ես ասել եմ։ որ սուտ է թէ ես ցանկալի և օգտակար համարած լինէի, որ հայերը պիտի ժողովրդականութիւն ընդունէին։ Ես բացատրեցի, որ կղերականութիւնը քրիստոնէութիւն չէ նշանակում։ Արասխանեանց խուլ մնաց։ Ասացի, որ իմ խօսքը թագաւորել կամեցող կղերի մասին էր, ասացի որ Հայաստանում կար կրօնաւորների մի կուսակցութիւն, որ հակառակվում էր թագաւորել կամեցող կղերին։ Այս էլ ոչինչ Արասխանեանցի համար։ Ես բերի Փաւստոս Բիւզանդացու խօսքերը, որպէս զի Արասխանեանց հասկանայ թէ ես նկատի եմ ունեցել Փաւստոսի ժամանակակից կղերին (V դարում Արշակունիների թուլացման, ջլատման մասին խօսք լինել չէ կարող, քանի որ այդ ժամանակ Արշակունիները միանդամայն ընկած էին, Հայաստանը բաժանված էր պարսից և յունաց մէջ և արդէն ներքին եղբայրասպան խռովութիւնների հանն էլ էր առել)։ Դարձեալ իզուր, դարձեալ անօգուտ։ Արասխանեանց իր պարկապզուկն է փչում...

2) Կիլիկեցիների վերաբերմամբ ես ժամանացոյց էի արել եկեղեցական պատմութեան դասագրքերը։ Արասխանեանց, իր չափահասութիւնը ցոյց տալու համար, դիմել է... Եղեանաց Արասխանեանց դրա դէմ հանեց իր հաւաքերատար խղճուկ ամսագրի 14 երեսներ։ Եւ ինչու համար։—Որպէս զի ապացուցանէ, թէ անբարեխիղճութեան մէջ ոչինչ չափ ու սահման չունի,—մի բան, որ ես ուզում էի ապացուցանել։

Այդ 14 երեսների կէսը, եթէ ոչ աւել, բաղկացած է հայհոյանքներից և փողոցային խեղկատակի ծամածռութիւններից։ Ես դէն եմ գցում այդ բաժինը. ես միշտ գիտեմ որ Արասխանեանցի յիշոցները չեն կարող վիրաւորել, որովհետև դա մի խմբագիր է, որ պատրաստ է մինչև գետին երկրպագութիւն տալ ամեն մէկին, որ երեք բաժանորդ կը գտնէ նրա համար. անցեալ անգամ էլ ասացի, միշտ էլ կասեմ որ նրա հայհոյանքները նոյն դինն ունեն ինձ համար, ինչ նրա վաղեմի ստոր շողոքորթութիւններն ու հաճոյախօսութիւնները, որոնք շռայլվում էին իմ հասցէին։ Ուրեմն թող վերադառնան բաղդխանայից հաւաքած այդ գոհարները Արասխանեանցի կաբինետը և բազմեն յօբելեանական դափնիների հետ, իբրև յիշատակ այն «մեծութեան», որ երազում է Արասխանեանց և որ նրա ամբողջ թշուառութեան պատճառն է... Դիմելով միւս, ոչ-հայհոյական բաներին, ես տեսնում եմ որ Արասխանեանց ջուր ծեծել է ուզում և կամաւոր խուլի դեր է ընդունել ոչ առանց յետին մտքի։ «Մուրճի» 14 երես լցնել... Արասխանեանցի գրական գործունէութեան մէջ դա մի ամբողջ բարերարութիւն է։ Բայց ես միտք չունեմ թոյլ տալու, որ Արասխանեանց երկար օգտվի իմ բարերարութիւնից։ Ջուր ծեծելը իմ գործը չէ. գիտեմ որ չէ կարելի վիճել դատարկ կարասի հետ, որ միտառակված գաղափարը, մարդկութեան պատիւը։ Ժամանակին խօսելը, մի որոշ միտք յայտնելը անհնարին բան է միայն «Մուրճի» ապաբախտ խմբագրի համար. ինչպէս միշտ, այս անգամ էլ նա լեթարգիայի մէջ էր։ Հ. Ջնդօյեանի ամօթալի նամակները, հ. Շարբոտանի եղուիտական «փոլիթիքան», Կ. Պոլսում հրատարակված այն անպատկառ բրոշիւրը, որ հրաւիրում էր մեզ, «հերձուածողներս», մտնել Հռովմի գիրկը,—ոչինչ, ոչինչ գոյութիւն չունէր քնած, մտավախութիւնից տառապող խմբագրի համար։ Եւ երբ մենք անողոքմ ծաղրի էինք ենթարկել Վանի ուխտ զրուշանոց կրօնավանառութիւնները, հարուածում էինք այն տմարդի պրոպագանդան, որի ներկայացուցիչներն են Ջնդօյեանները և նրանց նմանները թէ անցեալում և թէ ներկայումս,—հասաւ ժամանակը, որ Աւետիք Արասխանեանց սթափվի լեթարգիայից. նա քնաթաթախ աչքերը տրորելով, վեր կացաւ և առանց այլ և այլութեան ասաց թէ ես... կրօնավանառութիւն եմ քարոզում։

Խոստովանում եմ, այս ատիճան անբարեխղճութիւնը մինչև անգամ ինձ ապշեցրեց, ինձ, որի համար վաղուց ճշմարտութիւն է դարձել թէ Արասխանեանց միջից կէս կը դառնայ հաստատելու, որ կաթը սև է, եթէ ես ասած լինեմ թէ կաթը սպիտակ է։ «Մշակի» № 109-ի մէջ տպած նամակովս ես յայտնեցի, որ կայ մարդկային հասկացողութիւնների մէջ բարեխղճութիւն ասած բանը, որ պարտադիր է նոյն իսկ կատաղի հակառակորդների համար, և բերի մի քանի հաստատութիւններ։ Իմ նամակը «Մշակի» երկու սիւնակն էր գրաւում, բայց Արասխանեանց դրա դէմ հանեց իր հաւաքերատար խղճուկ ամսագրի 14 երեսներ։ Եւ ինչու համար։—Որպէս զի ապացուցանէ, թէ անբարեխղճութեան մէջ ոչինչ չափ ու սահման չունի,—մի բան, որ ես ուզում էի ապացուցանել։

Այդ 14 երեսների կէսը, եթէ ոչ աւել, բաղկացած է հայհոյանքներից և փողոցային խեղկատակի ծամածռութիւններից։ Ես դէն եմ գցում այդ բաժինը. ես միշտ գիտեմ որ Արասխանեանցի յիշոցները չեն կարող վիրաւորել, որովհետև դա մի խմբագիր է, որ պատրաստ է մինչև գետին երկրպագութիւն տալ ամեն մէկին, որ երեք բաժանորդ կը գտնէ նրա համար. անցեալ անգամ էլ ասացի, միշտ էլ կասեմ որ նրա հայհոյանքները նոյն դինն ունեն ինձ համար, ինչ նրա վաղեմի ստոր շողոքորթութիւններն ու հաճոյախօսութիւնները, որոնք շռայլվում էին իմ հասցէին։ Ուրեմն թող վերադառնան բաղդխանայից հաւաքած այդ գոհարները Արասխանեանցի կաբինետը և բազմեն յօբելեանական դափնիների հետ, իբրև յիշատակ այն «մեծութեան», որ երազում է Արասխանեանց և որ նրա ամբողջ թշուառութեան պատճառն է... Դիմելով միւս, ոչ-հայհոյական բաներին, ես տեսնում եմ որ Արասխանեանց ջուր ծեծել է ուզում և կամաւոր խուլի դեր է ընդունել ոչ առանց յետին մտքի։ «Մուրճի» 14 երես լցնել... Արասխանեանցի գրական գործունէութեան մէջ դա մի ամբողջ բարերարութիւն է։ Բայց ես միտք չունեմ թոյլ տալու, որ Արասխանեանց երկար օգտվի իմ բարերարութիւնից։ Ջուր ծեծելը իմ գործը չէ. գիտեմ որ չէ կարելի վիճել դատարկ կարասի հետ, որ մի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՒԵԼՈՐԴԷ

Երանի էր մեզ, եթէ ունենայինք խելացի հակառակորդ. բայց, որպէս հայ, զրկված ենք, ներկայումս, այդ պաշտօնից։

Մ. Նալբանդեան

—

Վանի խայտառակ կրօնափոխութիւնները ցոյց տուին, թէ որքան թանձր ու զզուելի է մեզ պատող խաւարը, եթէ միջնադարեան կղերական շահատակութիւնները կարելի է լինում կատարել մեր մէջ համարձակ, առանց քաշվելու։ Մեր ժամանակի համար կատարեալ ամօթ և անպատուութիւն էին այն միջոցները, որոնց դործադրողն էր Ջնդօյեան վարդապետը, և մենք, վրդովված, ձայն բարձրացրինք, յօդուածների մի երկար շարքի մէջ դատապարտեցինք կաթոլիկութիւնը ոչ իբրև կրօն (իւրաքանչիւր կրօն մեզ համար յարգելի է), այլ իբրև սպառազինված մի արշաւանք, որ ձգտում է տիրել ամեն տեղ և իբրև այդպիսի ոյժ՝ անասելի թշուառութիւններ է պատճառել մարդկութեան։ Ամեն տեսակ ֆանատիկոսութեան անհաշտ թշնամի, մենք այս դէպքում կամեցանք ցոյց տալ թէ որքան ատելի է կրօնական ֆանատիկոսութիւնը. ուստի, դիմելով պատմութեան, դուրս կանչեցինք այդ հրէշի զոհերին և խօսեցինք նրանց բերանով։

Խնդիրը ժամանակակից էր, հրատապ. լռութիւն պահպանել մենք յանցանք համարեցինք, այլապէս էր պահանջում քրիստոնէութեան խայ-

էին հայերը նրանով, որ Անդրկովկասում ամեն ինչ իրանց ձեռքն են գցել։ Հիմա ուրիշ ցաւ է գոյացել խեղճի համար։ Բանից դուրս է գալիս որ հայերը այժմ իրանց ձեռքն են գցել ամբողջ Կիսլովոդսկը։ Այս մի «յանցանքը», ի հարկէ, աւելի ևս վտանգաւոր է. Կիսլովոդսկը արդէն հիւսիսային Կովկասում է գտնվում, հիանալի կուրորտ է։ Եւ ահա մի շարք սարսափներ Սուվորինի համար։ Կարմիր էք երևակայել. Կիսլովոդսկում լաւ տները հայերին են պատկանում. կարմիր էք երևակայել—Կիսլովոդսկը դարձել է Նախիջևանի մի ճիւղը։ Կարմիր էք երևակայել, վերջապէս, այսպիսի սարսափ։

Այժմեան ժամանակ Կիսլովոդսկ եկածների թիւը 3000 է, և դրանցից 2100 հոգի հայեր են։ Ամեն ամարանոցում դուք կը գտնէք այդտեղ ապրող հայ ընտանիքներ. նրանց անլուռ խօսակցութիւնները իրանց շատ սուր հնչող նօտաներով, նրանց մշտական իրարանցումը ոչ օրին հանգիստ չեն տալիս։ Հայուհիները, որոնք միշտ պճնված են և զարդարված ամենամաքուր աղամանդներով, իրանք են լուանում կանացի զգեստի մի քանի կտորները. այսպէս է պահանջում հայկական օրէնքը։ Բայց երբ յետոյ սպիտակեղէնը փռում են պատշգամբների վրա չորացնելու համար, այն ժամանակ այդ բանը տեսնելը ոչ մի էսթէտիական զուարճութիւն չէ պատճառում և այդ սովորութեան հետ հաշտվելը դժուար է։

Ի՞նչ խօսք որ հայերը այդ իսկ պատճառներով կատարելապէս յանցաւորներ են և հասարակական հանգստութեան, էսթէտիական զուարճութիւնների տեսակէտից պէտք է...

Բայց մարդակերութեան գոհարը դեռ այդ չէ։ Գուցէ մեր ընթերցողներին յայտնի էլ չէ որ Պետերբուրգում հրատարակվում է «Русскій Трудъ» անունով մի շաբաթաթերթ և դրա խմբագիրն է Շարապովն։ Այդ Շարապովն էլ հայրենիքի մի հսկայական սիւն է երևակայում իրան։ Ապացոյց—այն միջոցը, որ նա առաջարկում է հրէաների բազմանալու դէմ։

Ամենագլխաւոր միջոցը—ասում է Շարապով—այն պիտի լինի, որ անչապաղ հրատարակվի օրէնք, որ սահմանափակէր հրէաների բազմանալու անչափ ընդունակութիւնը։ Սմուսնանալով շատ ջանել հասակում, վարելով պարապ կեանք և ունենալով հեշտասէր բնաւորութիւն, հրէաները բազմանում են անչափ, հաժեմատելով նրանց շրջապատող ազգութիւնների հետ։

«Новое Обозрѣніе» լրագիրը, բերելով այդ հանճարեղ կտորը, շատ իրաւացի կերպով ասում է.

Գ. Շարապովի առաջարկութիւնը դժուար է իրագործել գործնականապէս, ուստի նրան մնում է պնդել որ անհրաժեշտ է կոտորել բոլոր արու երեխաներին. այս ճանապարհով աւելի հեշտ կարելի է ազատվել հրէաներից։

Այո, բայց մթթէ կարծում էք թէ նոյն իսկ այդպիսի վայրենի գործերը կարող են սարսափեցնել Շարապովներին և նրանց հարիւրաւոր նմաններին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ահա մի քանի օր է, որ Թիֆլիսի նահանգապետի դիւանատան առաջ խմբվում է խնդրատուների մեծ թիւ, որոնք ցանկանում են ըստանձնելու գաւառական ոստիկանական ծառայողների պաշտօն։ Խնդրատուները պատկանում են նախկին զինուորական ծառայութեան մէջ եղած անձանց դասակարգին։

—

Կուր գետը այս տարի շատ տեղերում փոխել է իր ընթացքը։ Թիֆլիսի մօտ նա թեքվել է դէպի աջ և թողել է առանց ջրի այն ջրաղացները, որոնք շինված էին ձախ ափի վրա, որտեղով միայն անցնում է ջրի ամենաուժեղ հոսանքը։ Ջրաղացատէրերը ստիպված տեղափոխել են իրանց ջրաղացները դէպի գետի ներսը։ Կուրի հոսանքը չեղվելուց, ինչպէս յայտնի է, այս տարի դադարեցին գործել այն տիւրքինները, որոնց միջոցով ջուր էր հայթհայթվում Թիֆլիս քաղաքին։

—

Մեզ հաղորդում են, որ երկաթուղու գիծ անցկացնելը Բագուից դէպի Պետրովսկ մեծ մտատանջութիւն է պատճառել Շամախի գաւառում ապրող ուղտապաններին, որոնք ապրանք կրելով մեծ եկամուտ ունէին իրանց ուղտերից։ Ուղտապանութեամբ պարապում են Մարաղայ և շրջակայ գիւղերը։ Իւրաքանչիւր գիւղացի պահում է 5—10—20 ուղտ, որոնցից ստանում է տարեկան 150—300 բուբլի օգուտ ամեն մի ուղտից։ Հարուստ գիւղացիները պահում են մինչև 40—50 ուղտ։ Երկաթուղին անցկացնելուց յետոյ մնում է, որ ուղտապանները երթևեկեն Շամախու, Նուխու և Ղուբայի գաւառների այն գիւղերի մէջ, որոնք հեռու են երկաթուղու գծից։ Անկասկած նրանց եկամուտը կը պակասի և նրանք ստիպված պէտք է բաւականանան քիչ եկամուտով։

—

«Каспій» լրագիրը հաղորդում է, որ Ղուբայի կալուածատէրերը խնդիրք էին տուել, որպէս զի թոյլ տրվի Ղուբայից մինչև Բագու-Դէրբէնդ երկաթուղու ժամակայ կայարաններից մէկը երկաթուղու գիծ անցկացնել։ Այժմ, ինչպէս հաղորդում են, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը յետաձգել է ղուբացիների խնդիրքը, մինչև Բագու-Դէրբէնդեան երկաթուղու վերջանալը։

—

Գանձակի նահանգում գործող ագրոնոմների զեկուցագրից երևում է, որ այդ նահանգում այս տարի ընդհանրապէս խոտ և դարման քիչ է հաւաքվել. ուստի և առաջիկայ ձմեռը կենդանիներին կերակրելու նիւթի մեծ պակասութիւն կը զգացվի շատ տեղերում։ Եթէ տափարակները, որտեղ ձմեռները արածում են ոչխարի բազմաթիւ հօտեր, ժամանակին առատ անձրևներից չոռոգվեն, կարող է նոյնպէս դժուարանալ մեր երկրի խոշոր խաշնարածների վիճակը։

—

Լենքօրանի գաւառի կալուածատէրերից մէկը հաղորդում է, որ այս տարի ջրի սակաւութեան պատճառով բրինձի արտերի մի նշանաւոր մասը երաշտից փչացաւ։ Կան տեղեր, ուր վընասվել է բրինձի ցանքերի մի քառորդ մասը, բայց կան և տեղեր, ուր վնասվել է նրանց երեք քառորդը։ Աղքատութիւնը, որ հայթայթում է իր ապրուստը բրինձի միջոցով, շատ նեղ վիճակի մէջ է։

—

Ի նկատի ունենալով քաղաքային առաջիկայ ընտրութիւնները քաղաքներից շատերում, ներքին գործերի մինիստրութիւնը բացատրեց, որ եթէ մի որ և է անձն ժտրված է ընտրողական ցուցակի մէջ նրա ունեցած դիւղիականի հիման վրա, նրա անշարժ կալուածքի վրա եղած ապառիկը չէ կարող արգելք լինել նրա մասնակցութեան քաղաքային ընտրութիւններին։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակվում է նոր կանոնադրութիւն՝ գիւղերում դեղատուն բանալու հարցի վերաբերմամբ։ Դեղատներ բանալու իրաւունք մտադրութիւն կայ տալ նաև դեղագործական գիտութիւն ունեցող կանանց։

—

Ինչպէս հաղորդում է «Рижскій Вѣстникъ» լրագիրը, Իրիեվի և Վերրոսի գաւառի էստոնական գիւղատնտեսական ընկերութիւններին հրամայված է, որ այն բոլոր զեկուցումները, որոնք կարդացվելու են նրանց նիստերում, տալ նախապէս կարդալու տեղական ոստիկանութեան։ Այդ կարգադրութեան պատճառը եղել է այն, որ Վերրոսի գաւառի նորաբաց ընկերութիւններից մէկում քննվել են այնպիսի հարցեր, որոնք չեն վերաբերվում այդ ընկերութեան գործունէութեան շրջանին։

—

Հացէն փոխելու համար՝ շատ տեղերից կամ ոչինչ չեն ուղարկում, կամ ուղարկում են միայն մէկ հատ 7 կօպէկանոց մարկա, պատճառաբանելով, թէ ծանօթ չեն հացէն փոխելու պայմանների հետ։ Նորից յայտնում ենք, որ հացէ փոխելու համար պէտք է վճարել 40 կօպէկ։

—

Ստացանք Ն. Մօրեվի հետազօտութիւնը հացահատիկների մի հիւանդութեան մասին, որ առաջ է գալիս երաշտից և տաք քամիներից։ Մօրեվ, հիմնվելով թէ իր դիտողութիւնների և թէ մասնագիտական գրականութեան մէջ յայտնի մի քանի փաստերի վրա, եկել է այն եզրակացութեան, որ հացահատիկները ենթարկվում են առանձին սունկերի ազդեցութեան և վնասվում են։ Հետազօտութիւնը, որ կրում է «Захватъ хлѣбныхъ растеній на Сѣверномъ Кавказѣ» վերնագիրը, կազմում է միջին դիրքով, 50 երեսից բաղկացած մի գրքոյկ, որ լոյս է տեսել Կովկասեան փիլօքսերային կոմիտեի հրատարակութեամբ։

Մեզ գրում են ՍՂՆԱԽԻՑ. «Վերջապէս բնութիւնը խղճաց մեզ։ Յուլիսի 27-ին տեղաց յորդ անձրև. անձրևում էր ամբողջ գիշեր։ Անձրևը կեանք տուեց կորեկի արտերին և այգիներին։ Ալազանի հովիտը կենդանացաւ։ Քաղաքը ազատվեց թոզի հաստ շերտից և խեղդող օդից»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Երկաթուղու օգուտը դեռ չը տեսած՝ վնասը տեսանք։ Թիֆլիսից 3 «ժուլիկներ» եկել և խաբել են այստեղացի Տէր-Պողոսեան անունով մի պարոնի, տանելով 3000 բուբլի։ Զարագործներից երկուսը Ախալքալաքում բռնվեցին»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 29-ին վաղուց չը տեսնված, մեծ հեղեղ տեղի ունեցաւ մեր քաղաքում և շրջակայ գիւղերում։ Բարեբաղդաբար, հեղեղը ոչ մի վնաս չը տուեց. թերևս արտերին վնասող միջատները փչացնելով, օգուտ էլ տուած լինի»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Այս օրերս մեզ մօտ տեղի ունեցաւ մի յաւալի անցք, որին զոհ գնաց ինսարուկտոր Լօմնոսովի 6 տարեկան տղան։ Այդ երեխան, խաղալով Նաուէնկոի 6 տարեկան տղայի հետ, վերջինը բարձի տակից հանում է ատրճանակ և սկսում է նրանով խաղալ։ Ատրճանակը պարպվում է և յանկարծակի գնդակահար է անում Լօմնոսովի երեխային»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 27-ից մինչև 30-ը Գանձակի գաւառի լեռնային մասերում տեղացին յորդառատ անձրևներ, որոնք ոռոգեցին այրվող դաշտերը ու կենդանութիւն տուին գեաներին, առուներին ու աղբիւրներին։ Քաղաքի ու գիւղերի այգիները այժմ ապահովված կարող են համարվել չորանալուց. ջուրը մինչև այս սեղմի վերջը բոլորին էլ ապահովութիւն կը տայ։ Անձրևները մեծ օգուտ տուին ընդհանուր ազգաբնակութեան, մեծ ուրախութիւն պատճառեցին յուսահատված ժողովրդին, բայց մի գիւղ հասցրին թշուառութեան յետին ծայրին։ Այդ դժբաղդ գիւղն է Խաչակապը, որի արտերը, բանջարանոցներն ու այգիները զոհ գնացին անողորմ կարկուտին ու հեղեղին։ Յուլիսի 29-ին Խաչակապում երեք ժամ շարունակ գալիս է սարսափելի անձրևախառն կարկուտ, որը հողի հետ հաւասարեցնում է բոլոր արտերը, ուր արդէն սկսված էր հունձը։ Կարկուտին հետևում է մի անօրինակ անձրև. ձորերը լցվում են ջրով. Ղուշչարա գետը այնքան մեծանում է, որ հիմնայատակ է անում երեք հատ ջրաղաց, մի կամուրջ, քշում է տաւարի մի ամբողջ նախիր, մի թուրքի քոչ ուած հատ եզներով, որոնք բարձված են լինում իրեղէններով, ոչնչացնում է Խաչակապի բոլոր բանջարանոցներն ու այգիները, տեղը հող անգամ չը թողնելով. ջրի ալիքներին զոհ է գնում մի 12 տարեկան երեխայ, որը արածացնելիս է

ցին (օրպիսի անկողմնապահ հեղինակութիւն հայոց եկեղեցու հարցերում)։ Բայց ինչ է բերել նա նոյն իսկ Եզեանից։ Ահա. «Հայոց կաթողիկոսները ստիպված եղան յունաց կայսրների յոյսը՝ կրօնապէս յոյների հետ միանալու՝ չը կորել, և այդ հնարը՝ հաժաձայնութեան խաբուսիկ յոյսեր տալու մէջ էր կայանում»։ Այլ և Կիլիկիայի «հայոց մարմնաւոր և հոգևոր իշխանութիւնները... կաթոլիկաց ժողովներին մասնակցեցին, պապերի հետ բանակցեցին և միացման յոյսեր տուին»։ Ինչու Արասխանեանց այդքան քափ ու քրտինք է թափել իմ առածը հաստատելու համար։ Նա պատճառ ունի։ Եզեանց—Արասխանեանցներին հրեշտակը երազում յայտնել է, որ այդ միութիւնները խաղեր էին, որ կիլիկեցիները խաբում էին։ Ահա այդ չեմ ես իմացել։ Բայց զարմանալի է, որ նոյն հրեշտակը իր ժամանակին նոյն երազը չէ տուել արևելեան կղերականներին, որոնք ուժգնօրէն կիլիկիան անէծքներով և հայհոյանքներով. մանաւանդ զարմանալի է, որ կիլիկեցիները նոյն կերպ էին պատասխանում արևելցիներին և ոչ մի անգամ չասացին նրանց թէ իրանք խաբում են։ Ես հէնց այդ փոխադարձ արշաւանքներն եմ յիշատակել. ինչ գործ ունեմ թէ դրանք անկեղծ կամ կեղծաւոր խոստումներ էին, ինչ գործ ունեմ միութիւնների հետ, ինչու պիտի հետաքրքրվեմ թէ լաւ էր միութիւնը կրօնական տեսակէտից։ Իմ առջև մի ուժասպառ, փոքրիկ պատութիւն էր, որի դիակը քաշքշում էին երեք տեսակ կղերականներ. ես երեքին էլ դատապարտեցի, երեքին էլ ֆանատիկոս անուանեցի։ Իմ հայեցակէտը երբէք չեմ կարող հասկացնել Արասխանեանցին այն պարզ պատճառով, որ այս մարդը երբէք չի ուզի հասկանալ ինձ՝ լոկ անմիտ հակառակորդութիւնից դրդված։ Ուստի անցնում եմ, հարևանցի կերպով չնչտելով, որ Բիւզանդիան, որի անունը այնքան յիշատակվում է Արասխանեանցի քաղաքական երևելի դատողութիւնների մէջ, խորտակվեց ամենից առաջ այն պատճառով, որ չափազանց ֆանատիկոս էր։ Զիմանալ այս հասարակ իրողութիւնը—նշանակում է տգէտ լինել։ Եթէ պատմութիւնն ասում է թէ Կ. Պոլսի դռները Մէհէմէդ II-ի առաջ բաց անողներից առաջինը յունական ֆանատիկոսութիւնն էր, ով կը մտածէ, որ պատմութիւնը, ուրեմն, ասում է թէ յոյները քրիստոնէութիւն չը պիտի ընդունէին—Միայն Արասխանեանցը, միայն նա կարող է քարեր ճաքեցնել իր լոգիկայով։

3) «Մշակի» № 109-ի մէջ ես պատասխանելով Արասխանեանցի այն տիրացուական ակնարկներին՝ իբր թէ «Մշակը» Վարդանի և Վասակի մասին տիրացուական տեսակէտից «աղգաղաւ» հայեացքներ պիտի յայտնէ, ասել էի. «Թէ ինչպէս կը նայենք մենք Վարդանի, Վասակի և նրանց գործերի վրա—այդ մենք գիտենք։ Բայց Արասխանեանց իր տիրացուական եղբակացութիւնների համար լիառատ նիւթ կարող է գտնել Գարագաշեանի «Գնական պատմութեան մէջ»։ Եւ բերել էինք Գարագաշեանի կարծիքները Վասակի և կրօնական պատերազմի մասին։ Իւրաքանչիւր ազնիւ մարդ կը հասկանայ, որ մենք մեր կարծիքը չէինք յայտնել, որ Գարագաշեանն է անխոհեմութիւն հաժարել կրօնական պատերազմը, մենք ոչնչով չենք յայտնել թէ համակարծիք ենք, ընդհակառակն ասել ենք. «Գարագաշեան վաղուց է ասել այն, ինչ դուք մեզանից էք ապասում»։ Եւ ահա Արասխանեանց ընկել է մի խայտառակութեան մէջ։ Զը համարձակվելով ծպատ հանել Գարագաշեանի դէմ (որովհետև թշուառ ժտավարները փոքր ի շատէ հեղինակութիւն ունեցողների առաջ միայն կծկվել գիտեն), նա Գարագաշեանի «անխոհեմութիւն» որոշումը ինձ է յատկացնում և սարքում է մի զզուելի օրդիա։ Տեսնում էք—զառանցում է լեթարգիական ասպետը—Լէօն երէկ ասում էր թէ հայերը պիտի մազդեգականութիւն, ժամեդականութիւն, կաթոլիկութիւն ընդունէին, իսկ այսօր Վարդանանց պատերազմը, մեր ազգային պաշտելի տօնը, անուանում է անխոհեմութիւն։ Եւ բորբոքված ֆանատղիային ոյժ տալով, Արասխանեանց ամեն տեղ այդ «անխոհեմութիւն» բառն է հարստահարում, յօդուածի վերնագիր է դարձնում («Կրօնավաճառութիւնը իբրև քաղաքական խոհեմութիւն»), բղաւում է, ճաքվում, որ գոնէ այդ միջոցով ուրիշի ասածը իմ սեփականութիւն դարձնէ։ Թէ որքան փոքրոգի, խղճալի մարդ է իմ հակառակորդը, այդ երևում է նրանից, որ նա վերնագիրներով ուզում է իր այրված կաշին հովացնել։ «Կրօնավաճառութիւնը իբրև քաղաքական խոհեմութիւն» վերնագիրը միւս երեսների վրա դարձել է «Մշակի» կրօնավաճառութեան սկզբունքը», իսկ վերջին երեսի վրա (օ, ինչ սարսափ)՝ «Լէօ—կրօնավաճառութիւնը»... Եւ գնդապետ Հանրիի այդ սիրելի բարեկամը դեռ պատրաստ է եօթն աւետարանի վրա երդվել թէ ինքը խարդախող չէ...

4) Այդպիսի մի օրդիա այնքան պարզերեսութեամբ կատարելուց յետոյ կարող է լինել մի ուրիշ սև, զզուելի բան, որից քաշվէր Արասխանեանցը։ Ի հարկէ, ոչ։ Եւ ես բոլորովին չը զարմացայ, երբ տեսայ նրան անամօթութեան ծայրին հասած «Մուրճի» 708 երեսում, ուր նա պարզապէս ակնարկում է թէ ես քարոզում եմ «պապական ջնջոյականութիւն»։ Ամեն ինչ կատարեալ է։

Ահա իմ վաւերագրերը։ Ի՞նչ է ասում գրական էտիկան, ազնիւ մարդու մաքրասիրութիւնը։ Պէտք է դեռ էլի խօսել։

Աւելորդ է... Եւ ես այսուհետև ինձ համար ստորութիւն կը համարեմ որ և է ուշադրութիւն դարձնել Արասխանեանցի պէս մի արատաւոր գրողի վրա։ Թոյլ եմ տալիս բազաղխանայից և Հալաթարի մէյդանից ջուլներով յիշողներ բերել և յանձնել տպարանին, թոյլ եմ տալիս միջից թէկուզ վեց կտոր դառնալ՝ այս տեսակ քաջագործութիւններ կատարելու համար։ Իմ խորին արհամարհանքը—ահա այն միակ բանը, որին ես կարժանացնեմ Արասխանեանցին...

P. S. Արասխանեանցը ինձ անուանում է «Մուրճի» չափազանց եռանդուն ընթերցող»։ Եթէ դա էլ մէկն է այն անթիւ հայհոյանքներից, որ նա ցափում է ինձ վրա—ոչինչ չունեմ ասելու։ Իսկ եթէ գոնէ այստեղ նա քիչ անկեղծ է և ասում է այն, ինչ գիտէ փորձով, այն ժամանակ ես խորհուրդ կը տամ, որ նա ժոխիր ցանէ իր տասնամեայ գործունէութեան վրա, ողբայ իր խմբագրական գլուխը։ Եթէ ես եմ «չափազանց եռանդուն ընթերցողը», երևակայում եմ թէ ինչ բան է այդ Արասխանեանցը իր դժբաղդ, անասելի դժբաղդ ամսագրով։

Լէօ

լինում նախիրը։ Անկարելի է նկարագրել այն սրտաճմլիկ տեսարանը, որ ներկայացնում էր Խաչակապ գիւղը հեղեղից յետոյ. ամեն տեղ տիրում էր սուգ ու շիւան, աննկարագրելի վայնասուն։ Մի քանի ժամվայ ընթացքում գիւղացիք զրկվել են իրանց մի քանի տարվայ ապրուստից։ Դժբաղդ գիւղին այժմս սպառնում է սով իր բոլոր անտանելի հետևանքներով։ Կարկուտից ու հեղեղից համեմատաբար փոքր չափերով վնասվել են նաև Փիք ու Կիրանց գիւղերը։ Այդ երեք գիւղերի վնասը մօտաւորապէս կարելի է հաշուել 25000 բուբլի, մի կորուստ, որը խղճուկ գիւղական ժողովրդի համար կատարեալ տունքանդութիւն է, որի հետևանքները դեռ շատ տարիներ կը զգացվեն, եթէ նրան ոչ մի օգնութիւն ոչ մի տեղից չը հասնի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Հայ Հռոմէականաց պատրիարքական ընտրութեան վերջընթեր գործողութիւնը կատարուեցաւ երէկ, Երևելեաց Ժողովին գումարմամբ որ պատրաստեց ընտրելի եկեղեցականներուն հնգանուն ցանկը։ Պատրիարքական Տեղապահ Աւետիս արքեպիսկոպոս Արփիարեան կը նախագահէր նիստին, որուն ներկայ էին 56 անդամ, 12 կղերական և 44 աշխարհական։ Նախագահը աղօթքով մը բանալով նիստը, ժողովին հաղորդեց ընտրելիութենէ հրաժարեալ չորս եպիսկոպոսներու անունները՝ Տ. Մելքոն Նալբանեան, Տ. Յովհան Քիւրէչեան, Տ. Աւետիս Թիւրքեան և Տ. Անդրէաս Չէլէպեան։ Յետոյ ձեռնարկվեցաւ քուէարկութեան և առաւելագոյն քուէ ստացող եկեղեցականներու հնգանուն ցանկը պատրաստուեցաւ, որուն մէջէն մէկը Պատրիարք պիտի ընտրուի եպիսկոպոսաց ժողովին կողմէ։ Այդ հինգ ընտրելիներն են՝

Պօղոս եպիսկոպոս	Թէրզեան	44	քուէ
Կարապետ »	Քչուրեան	39	»
Սահակ »	Հաճեան	38	»
Պօղոս »	Էմմանուէլեան	37	»
Միքայէլ »	Խաչատուրեան	31	»

Հնգանուն ցանկէն դուրս մնացած եկեղեցականներն են՝ Պօղոս եպիսկոպոս Մարմարեան (26 քուէ), Աւետիս արքեպիսկոպոս Արփիարեան (21 քուէ), Ներսէս եպիսկոպոս Ճնտոյեան (13 քուէ), Յարութիւն եպիսկոպոս Ճամճեան (11 քուէ), Ստեփան եպիսկոպոս Իսրայէլեան (11 քուէ)։

Երէկ, վերջին պահուն, ծանուցինք թէ Հայ Հռոմէականաց Պատրիարքի ընտրութեան համար՝ Եպիսկոպոսական Ժողովը դռնփակ նիստ կընէ Բերա, Սաքըզ-Աղաճ, Ս. Աստուածածին եկեղեցին։ Այդ գումարման կը նախագահէր Պատրիարքական Տեղապահ Տ. Աւետիս արքեպիսկոպոս Արփիարեան, որ հաղորդեց կիրակի օրը գումարուած երևելեաց ժողովին քուէարկութեան տեղեկագիրը։ Յետոյ, եպիսկոպոսները խորհրդակցութիւն մը ունեցան՝ քուէարկութեան ձեռնարկելէ առաջ։ Նիստը դռնփակ ըլլալուն, գաղտնի կը պահուին այդ խորհրդակցութիւնները. սա միայն իմացուած է թէ երէկ իրիկուն Ժողովին կողմէ երկար հեռագիր մը ուղղուելով Հռոմ, ընտրելի հինգ եկեղեցականներէ իւրաքանչիւրի մասին ծանօթութիւններ հաղորդուեր և Լէոն ԺԳ. Պապին կարծիքը խնդրուեր է։ Միւս կողմէ, այս առաւօտեան «Սապահ» հետևեալ կը հաղորդէ. «Եպիսկոպոսական Ժողովը տասերեք անդամէ կը բաղկանայ և Պատրիարքի ընտրութեան համար երկու երրորդի մեծամասնութիւն պէտք է, այսինքն ինը քուէ, մինչդեռ եպիսկոպոսական Ժողովը նախ երեք՝ և յետոյ երկու մասի բաժնուեր է, մէկ մասը Ատանայի առաջնորդ Պօղոս եպիսկոպոս Թէրզեանին տալով իր քուէն, ու միւս մասը Կեսարիոյ առաջնորդ Պօղոս եպիսկոպոս Էմմանուէլեանին, որով երկու երրորդի մեծամասնութիւն չը գոյացաւ և այս պատճառով յետաձգուեցաւ ընտրութիւնը»։

Վերջին պահուն կիմանանք թէ Եպիսկոպոսական Ժողովը այս առաւօտ չարունակելով իր նիստը, վերջապէս համաձայներ է Կեսարիոյ առաջնորդ Պօղոս եպիսկոպոս Էմմանուէլեանին վրա, զոր ընտրեր է Պատրիարք։

Հայ Հռոմէականաց նորընտիր Պատրիարքը 70 տարեկան է, միաբան Զմմարայի վանքին. իր նախնական ուսումը այնտեղ ստանալէ ետքը, Հռոմ գացած է՝ բարձրագոյն ուսմանց հետևելու և աստուածաբանական տոքթորի վկայական ստացած է։ Քանի մը եկեղեցական հեղինակութիւններ ունի, հայերէն և հայատառ թուրքերէն։

Իբր 13 տարի առաջ եպիսկոպոս ձեռնադրուած է և երկար ատենէ ի վեր կը վարէ Կեսարիոյ Հայ Հռոմէականաց առաջնորդութիւնը։

Հայ Հռոմէականաց Պատրիարքի տեղապահ Տ. Աւետիս արքեպիսկոպոս Արփիարեան՝ ընկերակցութեամբ Կարապետ եպիսկոպոս Քչուրեանի՝ երէկ դատական պաշտօնատունը երթալով, նախարար Բարձր. Ապտիւրրահման փաշայի յանձնեց Տ. Պօղոս Պատրիարքին ընտրութեան մաղպաթան, զոր ստորագրած են Երևելեաց Ժողովին անդամները ու Սինոդը կազմող 13 եպիսկոպոսները։ Այդ տեղեկագիրը Ամլիյէին կողմէ պիտի մատուցուի Մեծ Եպարքոսին և անկէ Կայսերական Պալատ։

Աւելորդ չենք համարիր մեր արդէն իսկ հրատարակած տեղեկութեանց վրա աւելցնել Պատրիարքական ընտրութեան քուէհամարին մանրամասնութիւնները.

Պօղոս Եպիսկ.	Էմմանուէլեան	քուէ	8
Պօղոս »	Թէրզեան	»	3
Սահակ »	Հաճեան	»	1
Կարապետ »	Քչուրեան	»	1
			13

Տ. Պօղոս Պատրիարքին ընտրութիւնը չորեքշաբթի օրը հեռագրուած ըլլալով Լէոն ԺԳ. Պապին, երէկ շնորհաւորական հեռագիր մը ստացուեր է Հռոմէն։ Պապական նուիրակ մոնսէնիոր Պոնէդի ալ երէկ անձամբ Հայ Հռոմէականաց Պատրիարքարանը երթալով, շնորհաւորեր է նորընտիր Պատրիարքը։

Հանգուցեալ Տ. Ազարեան Պատրիարքին անձնական սենեակը և Պատրիարքարանի դահլիճը օրօնք կնքուած էին, չորեքշաբթի իրիկուն բացուելով, նորընտիր Պատրիարքը այնտեղ ընդունեց շնորհաւորական այցելութիւնները։

Երէկուան ֆրանսերէն «Սէրվէթ», Հայ Հռոմէական հասարակութեան վարչական կազմակերպութեան, յաջորդաբար ունեցած Պատրիարքներուն և յարակից պարագաներու վրա ծանօթութեանց ամփոփում մը հրատարակելէ ետքը, նորընտիր Պատրիարքին վրա խօսելով կը գրէ. «Էմմանուէլեան եպիսկոպոսը եկեղեցական դասին ընտրելին էր. բայց կը յուսանք որ աշխարհական կուսակցութիւնը պիտի համակերպի կատարուած իրողութեան, առանց որ և է բողոք արձակելու իր ընտրելիին (Ատանայի առաջնորդ Թէրզեան եպիսկոպոսին) ընտրութիւնը յաջողած չըլլալուն համար»։

Կեսարիոյ առաջնորդ Տ. Պօղոս արքեպիսկոպոս Էմմանուէլեանի ընտրութիւնը գրեթէ անակնկալ մը եղաւ Հայ Հռոմէական հասարակութեան համար, որուն Երևելեաց Ժողովէն կողմէ կիրակի օրը պատրաստուած հնգանուն ցանկին մէջ չորրորդ տեղը կը գրաւէր այդ ծերունի եկեղեցականը, 56 քուէարկուներու 37-ին քուէն միայն ստացած ըլլալով։ Եպիսկոպոսական ժողովը, որ ի սկզբան երկու մասի բաժնուած էր, մէկ մասը Ատանայի առաջնորդին ու միւս մասը Կեսարիոյ առաջնորդին վրա համաձայնիլ ուզելով, առանց բացարձակ մեծամասնութիւն գոյացնելու, երէկ՝ կէս օրին՝ դռնփակ նիստին մէջ կատարեց վերջնական ընտրութիւնը, իր քուէն միացնելով Էմմանուէլեան արքեպիսկոպոսին վրա, որ հաջակուեցաւ Պատրիարք։ Երէկուան նիստը տևեց առաւօտեան ժամը 2-էն մինչև 5, և քուէարկութեան աւարտումէն անմիջապէս ետքը բացուելով Ս. Աստուածածին եկեղեցւոյ տաճարին դուռները, ընտրութեան արդիւնքը յայտարարուեցաւ դուրսը խռնուող եկեղեցական ու աշխարհական բազմութեան, որոնք տաճար մտան։ Այդ միջոցին նորընտիր Պատրիարքը հագուեցուցած էին եկեղեցական հանդերձներով և եպիսկոպոսները՝ իրենք ալ զգեստաւորուած՝ Աւագ Խորանը առաջնորդեցին, ուր աղօթքներ ու մաղթանքներ կարդացուեցան. յետոյ, Պատրիարքը հանդիսաւոր կերպով առաջնորդուեցաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր ներկաներուն շնորհաւորութիւնները ընդունեց, և բարեմաղթութիւններ եղան Վեհ. Սուլթանին արևշատութեանը համար։

Պատրիարքական ընտրութեան մաղպաթան այսօր վաղը պատրաստուելով և ստորագրուելով, պիտի մատուցուի Բ. Դրան։ Էմմանուէլեան Տ. Պօղոս Պատրիարքին ընտրութիւնը երէկ իրիկուն հեռագրաւ ծանուցուեցաւ Հռոմ, Լէոն ԺԳ. Պապին։ Պատրիարքարանի կողմէ հեռագիրներ ուղղուեցան նաև գաւառներու Հայ Հռոմէական Առաջնորդարաններուն, ընտրութեան արդիւնքը ծանուցանող։

Կենսագրական այն հակիրճ ծանօթութեան վրա, զոր հրատարակեցինք երէկ, վերջին պահուն, Պատրիարքական ընտրութեան արդիւնքը ծանուցանելու առթիւ, մեծ բան մը չունինք աւելցնելիք այսօր։ Հայ Հռոմէականաց նորընտիր Պատրիարքը՝ երկար տարիներէ ի վեր կեդրոնէն հեռու՝ իր գաւառային առաջնորդութեան պաշտօնին մէջ ամփոփուած եկեղեցական մը ըլլալով։ 1829 յունուար 29-ին ծնած է Մարտինի Թէլէրմէն գիւղին մէջ. մանկական հասակէն կղերականութեան փափաք ունենալով, Զըմարի վանքը կը մտնէ նախնական ուսումը ստանալով, ուրկէ մէկ քանի ուրիշ ժառանգաւորներու հետ Հռոմ կը ղրկուի և բարձրագոյն ուսմանց շրջանը բոլորելով, աստուածաբանութեան վարդապետի վկայական կը ստանայ։ Ի դարձին Հռոմէ, վարդապետական աստիճան ստանալով, հովուական քանի մը պաշտօններ վարելէ ետքը, 1881 նոյեմբեր 18-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի և Կեսարիոյ առաջնորդ կընտրուի, պաշտօն զոր 18 տարիէ ի վեր կը վարէր խոհականութեամբ, գաւառին ոչ միայն Հայ Հռոմէական հասարակութեան, այլ և ամեն ազգի ժողովուրդներուն յարգանքը գրաւելով իր վրա։ Մասնաւորապէս քաջամուտ ըլլալով օսմանեան լեզուին և օրինաց, Կեսարիոյ կառավարական շրջանակներուն մէջ ալ մեծ համարում չհասած և գնահատուած էր պետական պաշտօնեաներէն։

Նորընտիր Պատրիարքը իր երիտասարդութեանը ժամանակ, երկհատոր Աստուածաբանութենէ մը զատ՝ գրած է նաև հայատառ և թրքաբարբառ քանի մը եկեղեցական հատորներ։

«Արևելք»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Intern. Corr.» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ թիւրքաց քաղաքական շրջաններում լուրեր են պտտում պարսից Շահի ծանր հիւանդութեան մասին։ Այդ լուրերը տարբեր բնաւորութիւն են կրում։ Թէհրանից եկողները պնդում են, որ Շահը հիւանդ է անբուժելի թոքախտով, ուրիշները հաւատացնում են, որ նա հոգեկան հիւանդութիւն ունի։

—«Times» լրագրի Բէլգրադի թղթակիցը հաղորդում է, որ Կնեաժէվիչի գործի քննութիւնը կը սկսվի մօտաւորապէս օգոստոս ամսի երկրորդ կէսում։ Սերբիական կառավարութիւնը դիմել է Բուխարէստի սերբական գործակալութեան քարտուղարին, որը մեղադրվում է Միլանի դէմ սպանութեան փորձին մասնակցելում։ Բայց որովհետև այդ մեղադրանքը չէ ապացուցված ոչ մի փաստով, այդ պատճառով բուխարեան կառավարութիւնը մերժել է կատարելու Սերբիայի կառավարութեան պահանջը։

—Աւստրիական զինուորական մինիստրութեան պաշտօնական «Reichswehr» լրագիրը հաղորդում է, որ Կ. Պօլսում մի ինչ որ անսովոր յուզիչ դրութիւն է տիրում։ Բ. Դուռը, որպէս թէ, լուր է ստացել, թէ ռուս-թիւրքական սահմանի վրա, թիւրքաց փոքրասիական կալուածների մօտ, ժողովվել են մեծ թիւով հայ գաղթականներ։

—Թէհրանից հեռագրում են «Times» լրագրին յուլիսի 24-ից, որ Բէնդէր-Բուշիրում կարանտինի վերաբերեալ կանոնադրութիւնները փոխված են, կարգը վերականգնվեց և ամեն ինչ հանգիստ է։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

3 օգոստոսի

ՐԷՆՆ։ Լուրերին նայելով, հէնց որ Լաբօրի վայր է ընկել, երկու մարդ, որոնք թաղված էին սպանութեան փորձի ժամանակ, յարձակվեցին վիրաւորվածի վրա, խուզարկեցին նրան և տարան մօտի բոլոր թղթերը։ Լաբօրիի դէմ կատարված սպանութեան փորձը Բէննում միահամուռ զայրոյթ է պատճառում։ Մէրը դիմել է քաղաքացիներին զայրալից յայտարարութեամբ։

ՊԱՐԻԶ։ Ոստիկանութիւնը ձերբակալեց Մասսոնին, հակասեմիտ պատգամաւոր Մորմինոի քարտուղարին, բնաւպարտիստ Լոբիէնին և էլի մի անձնաւորութեան, որ խառն է դաւադրութեան մէջ։

ՊԱՐԻԶ։ Սպասվում են նոր ձերբակալութիւններ։ Հակասեմիտական լիգայի առաջ, Շաբրոլ փողոցում, ոստիկանական հսկողութիւն է նշանակված, բայց չը կայ ոչ ոստիկանական կօմիսար, ոչ զօրք։ Փողոցներում երթևեկութիւնը դադարեցրած չէ, չը նայելով հետաքրքրվողների մեծ բազմութեան։

ԼԷՄԱՆՍ։ Ոստիկանական կօմիսարը ձերբակալեց երկաթուղու կայարանում Գալլէն անունով մի ինչ որ մի ծովային մեքենագործի, որ գնում էր Բէննից Հավր, և որը, նշաններին նայելով, նման էր այն մարդուն, որ բէվօլվէր էր արձակել Լաբօրիի վրա։

ՊԱՐԻԶ։ «Temps» լրագիրը ասում է, թէ այն բոպէից, երբ ձերբակալութեան հրամանը կը հաղորդվի Գէրէնին, նա կը ճանաչվի իբր ապատամբ և ենթակայ տաժանակիր աշխատանքի, իսկ եթէ սպանի որ և է մի մարդու, կը դատապարտվի մահվան։

Բոլոր լրագիրները Լաբօրիի դէմ կատարած սպանութեան փորձի առիթով զայրոյթ են յայտնում։

ԼԻՍՍԱԲՕՆ։ Օպօրտօում ժանտախտի 33 դէպքեր են եղել։ Նոր հիւանդացողներ չը կան։

ՐԷՆՆ։ Մի ականատեսի ցուցմունքից պարզվեց, որ առաւօտեան ժամի 5-ին մօտ երեք կասկածաւոր մարդիկ են նկատվել Լաբօրիի բնակարանի մօտ։ Լաբօրին ստացել է շատ անանուն սպառնական նամակներ, որոնցից երկուսը պարունակում էին նրան սպանելու սպառնալիք։ Վիրաւորվածը սաստիկ տենդ ունի. բժիշկները երկիւղ են կրում, թէ դուցէ վնասված լինի մէջքի ուղեղը, բայց կարծիք յայտնել կարող են միայն վաղը, մօտ 10 ժամին։

ՐԷՆՆ։ Վիրաւորվածի դրութիւնը լաւացած է թւում. տենդը դադարել է։

ԼԷՄԱՆՍ։ Գալլէն մեքենագործը հաստատեց իր alibi (ուրիշ տեղ գտնվելը) և ազատվեց։

ՐԷՆՆ։ Լաբօրի գիշերը անցկացրեց անքուն և սաստիկ տանջվում է, բայց տենդ չունի։ Երէկ ոչ մի բժշկական բիւլլետէն չը հրատարակվեց։ Թէպէտ և չէ վատացել, բայց երկիւղը չէ փարատվել։ Ցանցաւորի մասին չը կայ ոչ մի տեղեկութիւն։

ՐԷՆՆ։ Առաւօտեան Լաբօրիի առողջութեան մասին բիւլլետէն հրատարակվեց։ Գրութիւնը նոյնն է, տենդ չը կայ։

ՊԱՐԻԶ։ Հակահրէական դաշնակցութիւնը երեկոյեան դիմեց կոչումով հայրենասէրներին, որի մէջ պահանջում է, որ Պարիզի ազգաբնակութիւնը գործէ Շաբրոլ փողոցում փակված հակահրէականների հետ միասին։ Ինչ էլ պատահի նրանց հետ,—ասված է կոչումի մէջ,—մենք կը կարողանանք կատարել մեր պարտականութիւնը և պատրաստ ենք մեռնելու ազատութեան համար»։

Ոստիկանութեան գլխաւորի օգնական Գաստեր գնաց առաւօտեան 4 ժամ 20 րոպէին Գէրէնի բնակարանը ձերբակալութեան հրահանգով։ Գէրէն հրաժարվեց ընդունել հրահանգը և յայտնեց, թէ կընդդիմադրի մինչև վերջին ծայրայեղութիւն և թէ պատրաստ է աւելի շուտ մեռնել, քան անձնատուր լինել։ Գէրէնին ձերբակալութեան հրահանգը հաղորդելուց յետոյ, նա համարվում է ապստամբական դրութեան մէջ, ուստի և խիստ հրաման է տրված ձերբակալել ամեն մէկին, ով կը փորձի դուրս գալ Շաբրոլ փողոցի տանից կամ մտնել այնտեղ։ Գէրէնի ընկերներից երեքը, որոնք դուրս եկան առաւօտեան, ձերբակալվեցին. նրանց մօտ գտան բէվօլվէրներ և կացիններ։

ՏՐՕՍԼԷ։ Այստեղ եկաւ «Cecilia» ձկնորսական նաւը «Haeme» նաւապետի հրամանատութեան տակ։ Այդ նաւը պատահել է Սալինեան կղզիների մօտ, հիւսիսային լայնութեան 75°, Նատհօրստի արշաւախմբին, որ մինչ այժմ չէ գտել որ և է հետք Անդրէի։ Նատհօրստ շարունակում է ճանապարհը մինչև Իւիլլեամսի ծոցը։

ՊԷԿԻՆ։ Օտարազգի դեսպանութիւններին հաղորդվում են Ցունգ-լի-Եամէնի հրատարակած նոր հրահանգները Չինաստանում հանքեր շահագործելու վերաբերմամբ։ Այդ հրահանգների գլխաւոր կէտերն են. հանք մշակելու իւրաքանչիւր կօնցէսսիայի շրջանը պէտք է այստեղեան խստիւ սահմանվի. չեն կարող տրվել կօնցէսսիաներ մի որ և է նահանգի բոլոր հանքերի համար. չինական դրամագլխի մասնակցութիւնը իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ պէտք է հաւասար լինի ամենաքիչը հինգ տասերորդականի, փոխանակ երեք տասերորդականի. ձեռնարկութիւնների հսկողութիւնը մնում է լիովին չինացիների ձեռքին։ Այդ հրահանգները հաւանօրէն բողոք կառաջացնեն օտարազգի փողատէրերի և դեսպանութիւնների կողմից, որովհետև նրանց շնորհիւ իրականապէս անհնար է դառնում օտարազգի դրամագլխի մասնակցութիւնը կօնցէսսիաներում։

ՆԻՇ։ Հրատարակված է Ալէքսանդր թագաւորի հրովարտակը մինիստր նախագահին։ Նրանում ասված է, թէ այն առաջադիմութիւնը Սերբիայի վարչական գործերում, որ նկատվում է 1897 թւից ի վեր, դժգոհութիւն է զարթեցնում Սերբիայի թշնամիների մէջ, որոնք արտայայտեցին իրան ատելութիւնը Միլանի դէմ կատարված սպանութեան փորձով։ Սերբիան ցոյց տուեց, որ ինքը կարող է գոյութիւն ունենալ իբրև անկախ պետութիւն։ Թագաւորը նուիրելու է իր կեանքը ժողովրդի բարիքին և պետական ծրագրի իրագործման, որի ժամանակ նա յենվելու է կառավարութեան և ժողովրդական ներկայացուցիչների աղգասիրութեան վրա։

4 օգոստոսի

ԲԷՆՆ: Երեկոյեան 7 ժամին Լաբօրիի առողջական դրութիւնը գոհացուցիչ էր: Գնդակը կաշխատեն գտնել ռէնտգէնեան ճառագայթների միջոցով: Կարելի է, որ Դէմանժ վաղը կը պահանջի յետաձգել գործի քննութիւնը, որպէս զի Լաբօրիին հնարաւորութիւն տրվի վերադառնալ իր պարտաւորութիւններին երկուշաբթի: Վիքարըյժը կարծում է, որ այդ ժամանակամիջոցին վիրաւորվածը կարող է դատարան գնալ: Սպանութեան փորձ անողը դեռ ևս չէ գտնված:

ՊԱՐԻԶ: Վալդէկ-Րուսօ և Լէպին, արիւնահեղ ընդհարումից խուսափելու համար, վճռեցին յարձակումով չը գրաւել Գէրէնի տունը, բայց նրան թողնել ընտրելու կամ բանտը կամ կամաւորապէս անձնատուր լինելը (?): Վաղվան համար համապատասխան միջոցներ են ձեռք առնված: Գէրէնի բազմաթիւ բարեկամները աշխատում են յետ կանգնեցնել նրան դիմադրութիւնից: Մօտ 10 ժամին Շաբրօլ փողոցի վրա աննշան ցոյցեր եղան: Տեղի ունեցան մի քանի ձերբակալութիւններ:

ՊԱՐԻԶ: Բարեկամները համոզեցին Գէրէնին գնալ խորհրդակցելու Վալդէկ-Րուսսօի մօտ. վաղը նա պայմաններ կը դնի:

ԲԷՆՆ: Լաբօրիի առողջական դրութիւնը հընարաւորութեան չափ գոհացուցիչ է: Ոչինչ բարդութիւններ չը կան: Լաբօրիի բնակարանում անհաշիվ քանակութեամբ նամակներ և հեռագիրներ են ստացվում, որոնց մէջ դատապարտում են սպանութեան փորձը և մաղթում են նրան չուտափոյթ առողջութիւն:

ՄԱԴՐԻԴ: Սանիտարական խորհուրդը որոշեց՝ կարանտինի ենթարկել պօրտուգալիական նաւահանգիստներից եկող ճանապարհորդներին և ապրանքները. հիւանդանոց հիմնել ցամաքային սահմանի վրա, իսկ մինչև հիւանդանոց հիմնելը բոլոր յարաբերութիւնները կտրել Սպանիայի և Պօրտուգալիայի մէջ:

ՊԱՐԻԶ: Երեկոյեան 6 ժամին Սէն-Դէնիի արուարձանում մի մարդ, ինչպէս կարծում են անարխիստ, Ժօրժ անունով, սկսեց հայհոյել եպսիտներին. հակասէմիտներից մի քանիսը սկսեցին սպառնալ նրան. նա պատասխանեց բէվօլվէրի հարուածներով և վիրաւորեց երեքին, մէկին ծանր: Րէվօլվէր արձակողը ձերբակալվեց:

ԵԱԼՏԱ: Այսօր Եալտա ժամանեցին արդարադատութեան մինիստրը և ժողովրդական լուսաւորութեան մինիստրը:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

3 օգոստոսի

Մուրհակների ընթացքը

Երեք ամսով	Լոնդօնի վրա 10 ֆունտ	.	93,90
„ „	Բերլինի վրա 100 մարկ	.	$45{,}77^1/_2$
„ „	Պարիզի վրա 100 ֆրանկ	.	$37{,}27^1/_2$
Չէկը	Լոնդօնի վրա 10 ֆունտ	.	94,90
„	Բերլինի վրա 100 մարկ	.	46,30
„	Պարիզի վրա 100 ֆրանկ	.	$37{,}57^1/_2$
Բօրսային դիսկօնտ	. . .	.	$6—7^1/_2$
4% պետական ռէնտա	. .	.	$100^1/_8$

4%	ազն. կալ. բանկի գրաւ. թղթ. .	$98^7/_8$
$4^1/_2$%	մկայակ. գիւղ. հող. բանկի .	$98^3/_4$
5%	վիճակ. տոմս. առաջին ներքին փոխ.	$294^3/_4$
5%	„ երկրորդ „ „ .	254
5%	„ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.	207
5%	ոսկու ռէնտա	
5%	գրաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.	
$4^1/_2$%	ներքին երկաթուղ. փոխ. 1890 .	
Նոյն	. . . . . 1892 .	$100^3/_4$
5%	Թիֆլիսի վարկի ընկեր. . .	100
$4^1/_2$%	Թիֆլիսի կալուած. բանկի . .	$99^1/_2$
6%	Քութայիսի կալուած. բանկի . .	102
5%	„ „ „ . .	99
Ակցիաներ	Ռուս. առևտր.-արդիւն. ընկ. .	275
„	եղբ. Նօբէլի նաւթ. ընկեր. .	650
„	Կասպեական ընկ. . .	625
„	Բագուայ նաւթ. ընկ. . .	800

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԽՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ելիսավետեան փողոց, տ. № 86. տելէֆօն № 506: (հ.) 33—45

„ԲԱՐԻ ԳԻՇԵՐ“

Առանձին յատկութեան փոշի՝ միջատների դէմ

ԱՆՆՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ր. Կեօլեր և Ընկ. Մօսկվայի

Ընկերութեան գործարանի

ԾԱԽՎՈՒՄ է ամեն տեղ ու բոլոր յայտնի վաճառականների մօտ:

M. 75287 (15)

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԵՐՑՖԵԼԴ

Մադերեան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզասեռական (ելեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր

Առաւօտեան 9—12 ժ.

Երեկոյեան 5— 8 ժ.

20—60

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՄՊ.

ԾԱՂԿԱՅԻՆ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ

ՀՆԱՐՈՂՆԵՐ

ԳՈՐԾ Է ԱԾՎՈՒՄ որպէս օծանելիք, տուալէտային ջուր և օդը մաքրելու համար. (ա 5) 2—10

M. 87646.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (4/16 օգոստոսի) ՄԻՆԳՐԵԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԷԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անովէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէբէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մութաֆեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27: ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելքոր Հերշենրօդերին: (Ե. Հ. Չ.) 6—20

M. 75287

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եռաշխատրելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:
Բ) Առևտրական թղթակցութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և անձնավատ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքներն սկսվելու են 1899 թւի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդդեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: (9 22) 8—20



ԾԻՆԵՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Իմժեներ Ն. Բ. Պասսեկի

Тифлисъ, Михайловская ул. № 116,

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.

ՏԵԼԷՖՕՆ № 642.



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների:

ԲԻՒՐՕՆ ՅԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶՕ-ՇՈԳԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆօնների, լուսաւորութեան, տրամվայների և ույժի հաղորդելը հեռաւորութեան վրա:



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԻԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ ամեն տեսակ

իւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ:

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ երկաթէ կամուրջներ և տներ:

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Ե. Հ. Չ.) 26—100

Խորհուրդ ենք տալիս հեռատեսներին

Վերայում, արտիլերիան բանակների, և Գոլդլիստի լուցկի գործարանի մօտ, Մուշտաիդի հանդէպ, Կուր գետից մօտ, ծախվում են մաս-մաս հողեր:

Մինչև օգոստոսի 10-ը:

ՍԱԺԷՆԸ 3 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ցանկացողները թող դիմեն՝ Ջանջուղազեանի խանութ, Գօլօվինսկի պրօսպէկտ, տուն Զուբալօվի: (3, 5) 2—2

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Августа 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.